

Արցախի Կառավարման Ցատուկ Ցանձնախումբի Անդամները

Արցախի կառավարման յատուկ կոմիտէի անդամներուն մեծամասնութիւնը որոշուած է: - Ինչպէս յայտարարուած էր, Կոմիտէի նախագահն է Արքատի Վոլսկի, իսկ միւս անդամներն են՝

Վ. Միշին, որ կը զբաղի մշակութային, կրթական եւ առողջապահական հարցերով:

Վ. Սիդորով, Խ. Միութեան Կեդր. Կոմիտէի պատասխանատու աշխատող:

Ս. Կուպրէել, Ներքին գործերու գեներալ-Մայօր

Վ. Պլիսով, Խ. Միութեան ճարտարարուեստի նախարարի տեղեկալ:

Կոմիտէի հետեւեալ երեք անդամները արցախէն են.

Ս. Բարայեան, Ղարաբաղի Մարզգործ-կոմի նախագահ (որ Հենրիկ Պողոսեանի ճակատագրին չէ արժանացած «հանգստեան» կոչուելով):

Վ. Թովմասեան, Ժողովրդական վերահսկողութեան Կոմիտէի նախագահ:

Վ. Զաֆարով, Կուսակցութեան Շուշիի Շրջկոմի Ա. Բարտուղար:

Դեռ երեք թափուր աթոռ կայ, քանի կազմը պիտի բաղկանայ ընդհանուր 11 հոգիներէ: